«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 98 546 497
welcome@aybschool.am
www.aybschool.am

Արձանագրություն
№ ASBT06-2201-C (1702)

«Այբ կրթական հանգույց» հիմնադրամի 6-րդ գումարման հոգաբարձուների խորհրդի նիստի

Ամսաթիվ՝	17 փետրվարի 2022 թ.
Անցկացման վայր՝	«Այբ» դպրոց, ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 11/11/Zoom հարթակ
Նիստի սկիզբ՝	09:30

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հոգաբարձուների խորհրդի (ՀԽ) անդամներ՝
Ռուբեն Հարությունյան - ՀԽ նախագահ (առկա),
Աշոտ Մկրտչյան (առկա),
Արտավազդ Մինասյան (առցանց),
Դավիթ Փախչանյան (առցանց),
Լիլիթ Մինասյան (առկա),
Ռիմմա Անանյան (առցանց),
Իրինա Գեյկո (առկա),
Սարգիս Բաղալյան (առկա),
Վասկեն Յակուբյան (առցանց),
Տիգրան Հարությունյան (առցանց):

Նիստին չի մասնակցել՝
Արսեն Գալստյան

Վասկեն Յակուբյանը չի մասնակցել 9 և 10 հարցերի քննարկմանը:

Նիստին մասնակցել են հոգաբարձուների խորհրդի տասնմեկ անդամից տասը, ինչն ապահովում է որոշումների կայացման համար անհրաժեշտ քվորումը:
Առանց ձայնի իրավունքի նիստին մասնակցում էին.
Դավիթ Սահակյան (գործադիր տնօրեն) (առկա),
Նիստի քարտուղար ընտրվեց Սիրանուշ Սուքիասյանը (առկա),
Հայկ Պողոսյան (Գործառնական տնօրեն), (առկա), (մասնակցել է հարց 7-ին և 11-ին)
Նելլի Բալայան (Ֆինանսների կառավարիչ), (առկա), (մասնակցել է հարց 7-ին և 11-ին)

Հարց 1. Օրակարգի հաստատում: Հարցեր, որոնք այս օրակարգում ընգրկված չեն եղել:

Որոշում՝ հարց 1

1. Հաստատել ՀԽ-ի նիստի 2022 թվականի փետրվարի 17-ի օրակարգը:

2. Ավելացնել հարց 09. բարերարների մասնակցությունը ՀԽ նիստերին:

3. Ավելացնել հարց 10. Հետադարձ կապի (feedback) մեխանիզմ:

4 Ավելացնել հարց 11. Դպրոցում պատրաստվող սննդի որակ և քանակ:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 2. Ընտրությունների կարգի փոփոխություն: «Ռազմավար» անդամի ներգրավման ժամկետի փոփոխություն:

Հարց 3. Նախորդ նիստից անցած ժամանակահատվածում դպրոցի աշխատանքների մասին հակիրճ տեղեկություններ: Զեկույց Զեյթուն Սվիթ ՍՊԸ-ի հետ կնքված վարձակալության պայմանագրի կատարման մասին:

Հարց 4. Դիագնոստիկայից հետո աշխատանքային ընթացքի ներկայացում և արդյունքներ:

Հարց 5. Տնօրենի դասավանդման վերաբերյալ համապարփակ մոտեցում-առաջարկի ներկայացում:

Որոշում՝ հարց 5

Որոշվեց ընդունել ներկայացված առաջարկությունը.

1. *Կրթական գործընթացները և ուսուցչի աշխատանքը առավել լավ պատկերացնելու, Դպրոցի կառավարումը՝ մասնավորապես կրթական գործընթացի կազմակերպումը առավել արդյունավետ դարձնելու նպատակով՝ ակնկալվում է, որ «Այբ» դպրոցի տնօրենները բուն գործունեությանը զուգահեռ կունենան առարկայական դասաժամեր:*

2. *Տնօրենը կարող է դասավանդումը փոխարինել հետևյալ պայմաններից առնվազն երեքը կատարելով /a կտեր պարտադիր է/.*
    a. *մասնակցում է տարվա ընթացքում նվազագույնը չորս դասալսման՝ կա՛մ անհատապես, կա՛մ ակադեմիական տնօրենի, ուսուցիչների զարգացման բաժնի աշխատակցի, առարկայախմբի ղեկավարի հետ, դասալսումից հետո մասնակցելով դասի քննարկմանը, ուսուցչին բանավոր և գրավոր հետադարձ կապի տրամադրմանը:*
    b. *ուսումնասիրում է առարկայական ծրագիրը, առարկայական նկարագրերը՝ իր հարցերը, մեկնաբանությունները, դիտարկումները քննարկելով դասավանդող ուսուցչի հետ,*
    c. *հանդիսանում է իր առարկայի փոխարինող ուսուցիչ՝ փոխարինվող դասերի համար կազմելով և ներկայացնելով դասապլան, անդրադարձ, դասի ընթացքում կիրառված առաջադրանքներ,*
    d. *աշակերտների հետ տարվա ընթացքում վարում է նվազագույնը երկու աշխատարան/սեմինար առանձին թեմաների/հմտությունների շուրջ (կարող է լինել մեկ թեմայի շուրջ մի քանի աշխատարան կամ իրարից անկախ աշխատարաններ),*

3. *Սույն կարգավորումը չի վերաբերում գործառնական տնօրենին:*

Որոշումը կայացված է միաձայն:

Հանձնարարություն: Հանձնարարել ակադեմիական տնօրենին ի կատար ածել սույն որոշումը:

Հարց 6. Ֆինանսաբյուջետային հանձնաժողովի ձևավորում:

Որոշում հարց 6

Որոշվեց Ֆինանսաբյուջետային հանձնաժողովում ներգրավել հետևյալ անդամներին՝

Սարգիս Բաղալյան

Աշոտ Մկրտչյան

Ռուբեն Հարությունյան

Ֆինանսաբյուջետային հանձնաժողովի առաջին նիստին կմասնակցի նաև Արտավազդ Մինասյանը:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 7. 2021-2022 ուսումնական տարվա սեպտեմբեր-հունվար ամիսների բյուջեի կատարողական:

Որոշում հարց 7

Որոշվեց ի գիտություն ընդունել Նելլի Բալայանի ներկայացրած հաշվետվությունը:

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 8. Տարրական դպրոցի ընդունելություն:

Հարց 9. Բարերարների մասնակցությունը ՀԽ նիստերին:

Որոշում հարց 9

Որոշվեց.

1. *Քվեարկության ցանկերում ընդգրկված բարերարները կարող են մասնակցել ՀԽ-ի նիստին դիտորդի կարգավիճակով, եթե մասնակցության համար դիմել են ՀԽ նախագահին կամ տնօրենին առնվազն 24 ժամ առաջ:*
2. *Միևնույն նիստին կարող են մասնակցել առավելագույնը երկու հոգի՝ առաջին հայտ տվածները:*
3. *Նիստերին մասնակցությունը կարող է լինել միայն առկա եղանակով:*
4. *Դիտորդները մասնակցության համար ստորագրում են էթիկայի կանոնները:*
5. *Մայիսին քննարկել բաց նիստի հարցը:*
6. *Այս նիստից հետո ՀԽ-ի ձևավորմանը մասնակցած բոլոր բարերարներին ուղարկել նամակ, որտեղ կտեղեկացվի ՀԽ-ի որոշման մասին:*

Որոշումը կայացված է միաձայն:

Հարց 10. Հետադարձ կապի (feedback) մեխանիզմ:

Հարց 11. Դպրոցում պատրաստվող սննդի որակ և քանակ:

Որոշում հարց 11

Որոշվեց.

1. ուղարկվող ճաշացանկում նշել կալորիականությունը, որը հավասար է օրական նորմայի 50%-ին, ինչպես նաև կազմակերպել ծնողների խումբ՝ հարցի ուսումնասիրման համար:

2. ՀԽ-ին զեկուցել Iiko ծրագրի ներդրման ճանապարհային քարտեզի մասին:

Որոշումը կայացված է միաձայն:

Կետ 12 ՀԽ-ի հաջորդ նիստին առաջարկվող հարցեր:

Բոլոր հարցերը ներկայացնել մայիսի 05-ի նիստին, եթե այլ բան չի նշված հանձնարարության վերաբերյալ:

Կետ 13. Նիստի ավարտ

Հանդիպումն ավարտվեց ժամը 12:30-ին:

Հխ անդամներ

Աշոտ Մկրտչյան _____

Արտավազդ Մինասյան _____

Դավիթ Փախչանյան _____

Լիլիթ Մինասյան _____

Ռիմմա Անանյան _____

Իրինա Գեյկո _____

Սարգիս Բաղալյան _____

Վասկեն Յակուբյան _____

Տիգրան Հարությունյան _____

Հխ նախագահ

Ռուբեն Հարությունյան _____

Նիստի քարտուղար

Սիրանուշ Սուքիասյան _____